

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչությունը (այսուհետ՝ վարչություն) նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումն է:

2. Վարչության կանոնադրությունը հաստատում է Արդարադատության նախարարը (այսուհետ՝ նախարար):

3. Վարչությունը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, նախարարության և սույն կանոնադրությունների հիման վրա:

4. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են վարչության պետը, վարչության պետի տեղակալը և վարչության բաժինները:

#### 2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության նպատակներն են՝

1) հակակոռուպցիոն քաղաքականության մշակումն ու իրականացումը.

2) քրեակատարողական, այդ թվում՝ պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակումն ու իրականացումը.

3) ներման խնդրագրերի քննարկման գործընթացի իրականացումը:

6. Վարչության խնդիրներն են՝

1) հակակոռուպցիոն ռազմավարության մշակման և իրականացման ապահովումը, հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարման ապահովումը և համակարգումը.

2) քրեակատարողական, այդ թվում՝ պրոբացիայի ոլորտի ռազմավարության մշակման և իրականացման ապահովումը, միջազգային պարտավորությունների կատարման ապահովումը.

3) ներման խնդրագրերի քննարկման գործընթացի ապահովումը:

#### 3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում և իրականացնում է հակակոռուպցիոն ոլորտի և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ապահովմանն ուղղված քաղաքականությունը.

2) մշակում և իրականացնում է քրեակատարողական, այդ թվում՝ պրոբացիայի ոլորտի քաղաքականությունը:

3) իրականացնում է ներման խնդրագրերի քննարկման գործընթացը, այդ թվում՝ ապահովում Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի քարտուղարությունը:

#### 4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Վարչության իրավասություններն են՝

1) հակակոռուպցիոն, պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ապահովմանն ուղղված, և քրեակատարողական և պրոբացիայի ոլորտների (այսուհետ՝ համակարգման ոլորտներ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային փորձի ուսումնասիրության և վերլուծական աշխատանքների իրականացումը:

2) համակարգման ոլորտներում դեռևս չկարգավորված հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև արդեն իսկ ընդունված և ուժի մեջ մտած իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի մշակման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշման ներկայացումը:

3) համակարգման ոլորտներին առնչվող՝ համապատասխան ծրագրերով և ռազմավարություններով նախարարությանը վերապահված միջոցառումների կատարումը և դրանց կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը:

4) համակարգման ոլորտների վերաբերյալ քաղաքացիների (այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց) և իրավաբանական անձանց գրավոր առաջարկությունների, դիմումների և բողոքների օրենքով սահմանված կարգով քննարկման և վերլուծության արդյունքում պատասխանների նախագծերի կազմման աշխատանքների իրականացումը:

5) ներման խնդրագիր ներկայացրած անձի վերաբերյալ անձնական գործի կազման, Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի քարտուղարության իրականացման, ներման խնդրագրերի քննարկման ընթացքի վերաբերյալ կազմված գրանցամատյանների վարման աշխատանքների իրականացումը:

6) համակարգման ոլորտներում միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը:

7) համակարգման ոլորտներում միջազգային պարտավորությունների կատարման և համակարգման աշխատանքների իրականացումը:

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:

#### 5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԲԱԺԻՆՆԵՐԸ

9. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են՝

1) հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժինը:

2) քրեակատարողական քաղաքականության մշակման բաժինը.

3) ներման հարցերով բաժինը:

10. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

## 6. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի (սույն կետում այսուհետ՝ բաժին) գործառույթներն են՝

1) իրականացնել հակակոռուպցիոն ոլորտի (սույն կետում այսուհետ՝ համակարգվող ոլորտ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային փորձի ուսումնասիրության և վերլուծության աշխատանքները.

2) իրականացնել բաժնի կողմից համակարգվող ոլորտում դեռևս չկարգավորված հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավական ակտերի, այդ թվում՝ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի նախագծերի, ինչպես նաև արդեն իսկ ընդունված և ուժի մեջ մտած իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի մշակման աշխատանքները.

3) իրականացնել բաժնի կողմից մշակված իրավական ակտերի նախագծերը շահագրգիռ մարմիններին ներկայացնելու, վերջիններս նրանց հետ համաձայնեցնելու նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներ կազմակերպելու, ինչպես նաև շահագրգիռ մարմինների կողմից ստացված կարծիքների ամփոփման աշխատանքները.

4) օրենքով սահմանված կարգով իրականացնել բաժնի կողմից մշակված նախագծերին կից ներկայացվող փաստաթղթերի կազմման (հիմնավորումներ, տեղեկանքներ, ամփոփաթերթեր և այլն) աշխատանքները.

5) իրականացնել միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը բաժնի կողմից համակարգվող ոլորտին առնչվող հարցերով.

6) իրականացնել հակակոռուպցիոն ոլորտին առնչվող միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված միջոցառումները.

7) կիսամյակային կտրվածքով մշակել և ներկայացնել Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀՀԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի շրջանակներում Հայաստանին ուղարկված հարցաշարերի պատասխանները, ներկայացված զեկույցի նախագծի վերաբերյալ առաջարկությունները և դիտողությունները, համակարգել ՏՀՀԿ կողմից Հայաստանի գնահատման գործընթացը.

8) Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) շրջանակներում մշակել և տրամադրել պարբերական հաշվետվությունները Կոնվենցիայի պահանջների կատարման ընթացքի վերաբերյալ, մշակել և տրամադրել ներկայացված հարցաշարերի պատասխանները, համակարգել Կոնվենցիայի կատարման գնահատման գործընթացը, ներկայացված զեկույցի նախագծի վերաբերյալ ներկայացնել առաջարկությունները և դիտողությունները.

9) մշակել և ներկայացնել Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի կողմից (այսուհետ՝ ԳԲԿՈ) տրամադրված հարցաշարերի պատասխանները,

տրամադրել պարբերական հաշվետվությունները ԳՐԵԿՈ-ի կողմից Հայաստանին ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ, համակարգել դրանց գնահատման գործընթացը, ներկայացված զեկույցի նախագծի վերաբերյալ ներկայացնել առաջարկությունները և դիտողությունները, համակարգել զեկույցով Հայաստանին տրված հանձնարարականների կատարմանն ուղղված աշխատանքները.

10) տրամադրել կարծիք համակարգվող ոլորտին որևէ կերպ առնչվող միջազգային փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ, նախապատրաստել հաշվետվություններ արդեն ընդունված փաստաթղթերի վերաբերյալ.

11) ապահովել ներկայացուցչություն ոլորտային միջազգային կառույցներում.

12) իրականացնել բաժնի կողմից համակարգվող ոլորտների վերաբերյալ քաղաքացիների և իրավաբանական անձանց գրավոր առաջարկությունների, դիմումների, այդ թվում՝ տեղեկատվության հարցումների, և բողոքների օրենքով սահմանված կարգով քննարկման և վերլուծության արդյունքում պատասխանների նախագծերի կազմման աշխատանքները:

12. Քրեակատարողական քաղաքականության մշակման բաժնի (սույն կետում այսուհետ՝ բաժին) գործառույթներն են՝

1) իրականացնել քրեակատարողական, այդ թվում՝ պրոբացիայի ոլորտի (սույն կետում այսուհետ՝ համակարգվող ոլորտ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային փորձի ուսումնասիրության և վերլուծության աշխատանքները.

2) իրականացնել բաժնի կողմից համակարգվող ոլորտում դեռևս չկարգավորված հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև արդեն իսկ ընդունված և ուժի մեջ մտած իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի մշակման աշխատանքները.

3) իրականացնել բաժնի կողմից մշակված իրավական ակտերի նախագծերը շահագրգիռ մարմիններին ներկայացնելու, վերջիններս նրանց հետ համաձայնեցնելու, նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներ կազմակերպելու, ինչպես նաև շահագրգիռ մարմինների կողմից ստացված կարծիքների ամփոփման աշխատանքները.

4) օրենքով սահմանված կարգով իրականացնել բաժնի կողմից մշակված նախագծերին կից ներկայացվող փաստաթղթերի կազմման (հիմնավորումներ, տեղեկանքներ, ամփոփաթերթեր և այլն) աշխատանքերը.

5) իրականացնել միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը բաժնի կողմից համակարգվող ոլորտներում առնչվող հարցերով.

6) ապահովել պատիժները կատարելու նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված հրատապ, ընթացիկ և տարեկան հաշվետվությունների վերաբերյալ նախարարության մեկնաբանությունների տրամադրումը.

7) ապահովել քրեակատարողական, այդ թվում՝ պրոբացիայի ոլորտի առնչությամբ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվող (այդ թվում՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ)

զեկույցների քննարկումը, վերլուծությունը և անհրաժեշտության դեպքում նախարարության մեկնաբանությունների տրամադրումը.

8) տրամադրել կարծիք համակարգվող ոլորտին որևէ կերպ առնչվող միջազգային փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ, նախապատրաստել հաշվետվություններ արդեն ընդունված փաստաթղթերի վերաբերյալ.

9) ապահովել ներկայացուցչություն ոլորտային միջազգային կառույցներում.

10) իրականացնել բաժնի կողմից համակարգվող ոլորտների վերաբերյալ քաղաքացիների (այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց) և իրավաբանական անձանց գրավոր առաջարկությունների, դիմումների, այդ թվում՝ տեղեկատվության հարցումների, և բողոքների օրենքով սահմանված կարգով քննարկման և վերլուծության արդյունքում պատասխանների նախագծերի կազմման աշխատանքները:

13. Ներման հարցերով բաժնի (սույն կետում այսուհետ՝ բաժին) գործառույթներն են՝

1) կազմել ներման խնդրագիր ներկայացրած անձի վերաբերյալ անձնական գործը.

2) իրականացնել Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի քարտուղարության աշխատանքները, այդ թվում՝ Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի կազմակերպատեխնիկական աշխատանքները, հանձնաժողովի նիստերի արձանագրումը, հանձնաժողովի եզրակացության նախագծի կազմումը և հանձնաժողովի ընթացիկ գործունեության ապահովմանն ուղղված անհրաժեշտ այլ գործողությունների կատարումը.

3) իրականացնել ներման ոլորտի վերաբերյալ քաղաքացիների և իրավաբանական անձանց գրավոր դիմումների, միջնորդությունների և բողոքների օրենքով սահմանված կարգով քննարկման և վերլուծության արդյունքում պատասխանների նախագծերի կազմման աշխատանքները.

4) իրականացնել Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերի և ներում շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերի նախագծերի՝ իրավունքի ուժով ուժի մեջ մտնելու մասին ծանուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը.

5) կազմակերպել ներման խնդրագրերի քննարկման ընթացքի վերաբերյալ կազմված գրանցամատյանների վարումը.

6) կազմել բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ և այլ փաստաթղթեր:

## 7. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

14. Նախարարը ղեկավարում է նախարարության գործունեությունը:

15. Վարչության գործունեությունը համակարգում է նախարարի համապատասխան տեղակալը՝ իր համակարգման լիազորությունների շրջանակներում:

16. Վարչությունը գործում է վարչության պետի անմիջական ղեկավարությամբ:

17. Վարչության պետն անմիջական հաշվետու է նախարարին և նախարարի համապատասխան տեղակալին:

18. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է նախարարը կամ նախարարի համապատասխան տեղակալը:

19. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը վարչության պետը կարող է ստորագրել անմիջական ղեկավարի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ: